ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/192

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Վ. Հուսյանի, Ա. Ղազարյանի,

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.04.2022թ. թիվ 26/26-1/6783-2022 գրությամբ «ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 12.04.2022թ. թիվ 01/456-2022 գրության հիման վրա, 19.04.2022թ. թիվ 26/26-1/6783-2022 գրությամբ նախաձեռնել է «ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ին

(հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 02.05.2022թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ձեր վարույթում է գտնվում Երևանի քաղաքապետարանի /այսուհետ՝ Պատվիրատու/ գրավոր հիմքերի համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ին /այսուհետ՝ Ընկերություն/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/201 ծածկագրով ընթացակարգը /այսուհետ՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգը նախաձեռնվել է ՀՀ Ֆինանսների նախարարության 19.04.2022թ.-ի թիվ 26/26-1/6783-2022 գրությամբ, որով ՀՀ Ֆինանսների նախարարությունը բողոքները քննող անձին է փոխանցել Երևանի քաղաքապետարանի 12.04.2022թ.-ի թիվ 01/456 գրության պատճենը և խնդրել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ընթացքը

1. Գործի նախապատմությունը.

1.1. Ընկերությունը մասնակցել է Պատվիրատուի հայտարարած թիվ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/85 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին և 2-րդ չափաբաժիններին:

1.2. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 04.04.2022թ. թիվ 2 Արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Ընկերության կողմից հաստատված փաստաթղթերը (Հավելված 1) դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ.
- Բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.2)

- Չի ներկայացվել հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

1.3. Նույն արձանագրության 4-րդ կետով հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել Ընկերությանը սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել համակարգի միջոցով:

1.4. Ընկերության կողմից ձեռնարկվել են սահմանված մեկօրյա ժամկետում անհամապատասխանությունները շտկելու և ուղղված տարբերակը պատվիրատուին հասու դարձնելու ուղղությամբ: Անհամապատասխանություններն ուղղվել են և արձանագրությամբ սահմանված ժամկետում հասու դարձվել Պատվիրատուին:

1.5. Այնուհետև 06.04.2022թ. թիվ 3 Արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի, Ընկերության կողմից չի ներկայացվել հրավերով պահանջվող հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով, և նշված հիմքով հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

1.6. Ցանկանում ենք նշել, որ մեր գործողությունները նպատակաուղղված են եղել հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների՝ ամբողջությամբ շտկելուն, և մեր կարծիքով բովանդակային առումով դրանք շտկվել են: Սակայն, պետք է նաև արձանագրել, որ ձևական (ֆորմալ) տեսանկյունից, կատարված ուղղումներից ոչ բոլորն են Պատվիրատուին հասու դարձվել մրցութային փաստաթղթերի ներկայացման նպատակով օգտագործվող էլեկտրոնային համակարգի միջոցով: Մասնավորապես, հայտի ապահովումը (բանկային երաշխիքը), ժամանակի սղության պատճառով, Պատվիրատուին հասու է դարձվել մրցույթի հայտարարության մեջ նույնպես նշված՝ մրցութային հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին՝ երաշխիք տված բանկի աշխատակցի էլեկտրոնային հասցեի միջոցով:

Այսինքն, ցանկանում ենք արձանագրել, որ Ընկերության կողմից կատարվել են այն բոլոր գործողություններները, որոնք գտնվել են Ընկերության և Ընկերության պաշտոնատար անձանց պատասխանատվության տիրույթում, և որոնց շտկման ու Պատվիրատուին հասու դարձնելու հնարավորությունը կախված չի եղել երրորդ անձանց (երաշխիք տրամադրած բանկի) գործողություններից կամ նրանց կողմից ընդունվելիք որոշումներից: Մասնավորապես, Ընկերությունը Դիմում-Հայտարարությունը հաստատել է

էլեկտրոնային թվային ստորագրությամբ և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հետ միասին ուղարկել համակարգի միջոցով:

Ինչ վերաբերում է արձանագրված երրորդ անհամապատասխանությանը, ապա դրա շտկման համար անհրաժեշտ է եղել երրորդ անձի, տվյալ դեպքում Բանկի որոշումը, որի ընդունման ժամանակահատվածն ուղղակիորեն դուրս է եղել Ընկերության ազդեցության տիրույթից:

1.7. Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունը ծանուցվելուց անմիջապես հետո ձեռնամուխ է եղել արձանագրված անհամապատասխանությունների վերացմանը և հայտի ապահովման մասով դիմում է ներկայացրել գործընկեր բանկին՝ խնդրելով հնարավորինս սեղմ ժամկետում տրամադրել երաշխիք:

1.8. Բանկը, բարձր գնահատելով «ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ի հետ ձևավորված գործընկերային հարաբերությունները, հաշվի առնելով բանկի և Ընկերության միջև երկարատև համագործակցության կայունությունը, նույնիսկ այն պայմաններում, երբ նման երաշխիքներն, ըստ բանկի կողմից տրված գրության, սովորաբար տրամադրվում են 9 աշխատանքային օրվա ընթացքում, բանկը 1 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է բանկային երաշխիք:

1.9. Հաշվի առնելով ժամանակի սղությունը և այն հանգամանքը, որ Պատվիրատուի՝ «Էլեկտրոնային աճուրդի մասին» հայտարարության մեջ նշված էր նաև մրցութային հանձնաժողովի քարտուղար Վաչագան Մեժունցի էլեկտրոնային հասցեն, Ընկերության ներկայացուցիչը խնդրել է Բանկի աշխատակցին երաշխիքի սքանավորված տարբերակն ուղարկել Հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին, որպեսզի հայտը գնահատելիս ապահովված լինի նաև բանկային երաշխիքի առկայությունը:

1.10. Սակայն հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվեց, որ մեր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները շտկվել են մասնակի և մեր հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

2. Դիրքորոշման հիմնավորումները

Կարծում ենք, որ «ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/201 ծածկագրով ընթացակարգն արդարցի չէ և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորումներով.

2.1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Քաղաքացիական իրավունքները և պարտականությունները

ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

Գնումների մասին ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

Օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության դեպքում:

Ուստի գտնում ենք, որ այն դեպքերում, երբ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, կամ խախտումն ինքնին պայմանավորված է եղել օբյեկտիվ գործոններով և ըստ էության կրում է ձևական (ֆորմալ) բնույթ, ապա Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել մասնակցի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելուն:

Նշված հարցին բազմիցս անդրադարձել է բողոքներ քննող անձն իր նախկինում կայացված որոշումներում, մասնավորապես մատնանշելով, որ պարտավորությունների խախտման հիմքերը կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Այդուհանդերձ, բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ և բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովվելու ուղղությամբ

(իր ձեռքի տակ եղած բոլոր հնարավոր միջոցներով բանկային երաշխիքը Պատվիրատուին հասու դարձնելու համար), սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

2.2. Անհրաժեշտ ենք համարում նաև ընդհանրապես ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ կարող են լինել իրավիճակներ, երբ թերություններն ուղղելու համար սահմանված մեկ օրյա ժամկետը պրակտիկ տեսանկյունից, բավարար չլինի զուտ տեխնիկական խնդիրների ծագման առումով (որոնք մեր իրականության մեջ հաճախ հանդիպող երևույթներ են), մասնավորապես էլեկտրաէներգիայի անջատումներ, ինտերնետի հետ կապված խափանումներ, կամ այլ օբյեկտիվ գործոններ:

Տվյալ դեպքում գործում առկա փաստերով ապացուցվում է, որ Ընկերությունը ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ և բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, այն է՝ թերություններն ուղղելու համար սահմանված մեկօրյա ժամկետում դիմել է բանկ և բանկի ընթացակարգերով սահմանված ժամկետներից շատ ավելի սեղմ ժամկետներում ստացել բանկային երաշխիքը, ու նկատի ունենալով, որ ֆիզիկապես չի հասցնի այն ուղարկել էլեկտրոնային համակարգի միջոցով՝ խնդրել է բանկի աշխատակցին էլեկտրոնային փոստի միջոցով այն ուղարկել պատվիրատուի կողմից տրված հայտարարության մեջ նշված՝ մրցութային հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին:

Բանկը համապատասխան էլեկտրոնային նամակով տեղեկացրել է Պատվիրատուին՝ բանկային երաշխիքի թողարկման և դրա առկայության փաստի մասին: Այսինքն, Ընկերության կողմից ձեռնարկված գործողությունների արդյունքում բանկային երաշխիքը հասու է դարձվել Պատվիրատուին, ինչը Պատվիրատուի մոտ պետք է որ ողջամտորեն ձևավորեր համոզմունք՝ Ընկերության կողմից մրցութային հայտարարությամբ ստանձնած պարտավորությունների կատարման պատրաստակամության մասին, սակայն հայտի գնահատման ընթացքում՝ բանկային երաշխիքը բանկի աշխատակցի կողմից էլեկտրոնային այլ համակարգի միջոցով ուղարկված լինելու և այն Պատվիրատուի համար հասու դարձրած լինելու փաստական հանգամանքները հաշվի չեն առնվել:

Ընդ որում, հատկանշական ենք համարում նաև ընդգծել այն հանգամանքը, որ մրցույթի հայտարարության մեջ մրցութային հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեի առկայության փաստը մեզ հիմք է տվել ողջամտորեն ենթադրելու, որ տվյալ անձը հանդիսանալով մրցույթի գործընթացների իրականացման առումով պաշտոնատար անձ իրավասու է իր էլեկտրոնային հասցեին ստանալ մրցույթի հետ կապված պաշտոնական

փաստաթղթեր, որ մասնակիցներն այդ էլեկտրոնային հասցեն, որպես այլընտրանքային, նույնպես կարող են օգտագործել և, որ բանկային երաշխիքն ուղարկելով տվյալ պաշտոնատար անձի էլեկտրոնային հասցեին Ընկերությունը կհամարվի խախտումը վերացրած անձ:

2.3. Ցանկանում ենք նաև բողոքներ քննող անձի ուշադրությանն արժանացնել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից 2-րդ չափաբաժնով ներկայացված գնային առաջարկը եղել է անհամեմատ մատչելի ոչ միայն մյուս մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկից, այլ նաև գնումներով նախատեսված նախահաշվային գնից:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նշված գինը կարողացել ենք տրամադրել մեր արտասահմանյան գործընկերների հետ երկարատև բանակցությունների արդյունքում: Այսինքն, բավականին մեծ ժամանակահատված է պահանջվել որպեսզի ընկերությունը կարողանա պատվիրատուին տրամադրել շահավետ, մատչելի և ընդունելի առաջարկ:

Տիրապետելով շուկայում առկա գնային քաղաքականությանը և հաշվի առնելով հայտարարված աճուրդի արդյունքում Երևանի քաղաքապետարանի կարիքները բավարարելու հանգամանքը՝ փորձել ենք մեր ուժերի ներածին չափով առաջարկել համայնքի համար մատչելի, տնտեսող գնում: Նշված գինն առաջարկելիս ընկերությունն ըստ էության կարելի է ասել, որ որևէ շահույթ չի հետապնդել (նախատեսված շահույթը եղել է շատ չնչին)՝ առաջնային համարելով համայնքի շահը:

2.4. Բացի այդ, պետք է նշենք, որ հայտի ապահովումը «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է, և օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև հայտի ապահովման նպատակին, որն ըստ էության ծառայում է մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ապահովմանը:

Նշված հարցին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/12436/02/18 քաղաքացիական գործով իր 2021 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ: ՀՀ վճռաբեկ դատարանը մասնավորապես նշել է, որ հայտի ապահովման նպատակը մասնակցի կողմից հայտերի ներկայացման փուլից մինչև պայմանագրի կնքման փուլն ընկած ժամանակահատվածում մասնակցի կողմից հայտի ներկայացմամբ ստանձնած պարտավորությունների կատարման ապահովումն է: Ուստի ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքմամբ եզրափակվում է հայտի ապահովման գործառույթը, առավել ևս, որ ընտրված մասնակիցը պարտավորվում է ներկայացնել պայմանագրի ապահովում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն: Ի տարբերության հայտի ապահովման՝ պայմանագրի ապահովումն ապահովում է պայմանագրի կատարման գործընթացը:

Նույն որոշման մեջ դատարանը նշել է. «Մինչդեռ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ Վերաքննիչ դատարանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը պետք է մեկնաբաներ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի կանոններով (Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից)՝ բացահայտելով օրենսդրի նպատակը, իսկ Հիմնադրամի հրավերի, Ընկերության հայտի, բանկի կողմից տրված երաշխիքի բովանդակությունը պետք է բացահայտեր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի կանոններով՝ այդ թվում գնահատելով բանկի կողմից հետագայում տրված գրությունները (որոնք կարող էին բացահայտել երաշխիքի պայմանագիրը կնքելիս կողմերի իրական կամքը):»

Այս տեսանկյունից գտնում ենք, որ ընկերությունը մրցույթի 1-ին և 2-րդ չափաբաժիններով ներկայացնելով հայտ, 2-րդ չափաբաժնով ներկայացնելով ամենամատչելի առաջարկությունը, մրցույթի կասեցման որոշմամբ սահմանված

ժամկետում վերացնելով մատնանշված թերությունները, իրականում նպատակ է հետապնդել մասնակցել և հաղթել տվյալ մրցույթում:

Ավելին, խնդրելով բանկի աշխատակցին (ժամանակի սղության պատճառով) բանկային երաշխիքը ուղարկել մրցութային հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին՝ ձեռնարկել է տվյալ պահին իրենից կախված բոլոր հնարավոր միջոցները, բանկային երաշխիքը պատվիրատուին հասու դարձնելու առումով, որպիսի հանգամանքը հիմք կտար պատվիրատուին արձանագրելու, որ ընկերությունը, մասնակցելով մրցույթին, չի խուսափում և չի խուսափելու իր ստանձնած պարտավորությունների կատարումից (երաշխիքի տրամադրման նպատակ):

Բացի այդ, Օրենսգրքի 383-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

Օրենսգրքի 386-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիքը չի կարող հետ կանչվել երաշխիք տված անձի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով:

Օրենսգրքի 388-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիքն ուժի մեջ է մտնում այն տալու օրվանից, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով:

Վերոհիշյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ երաշխիք տված բանկն իրավունք չունի հետ կանչել իր կողմից տրված և տրման փաստով ուժի մեջ մտած երաշխիքը, եթե այլ բան դրանով նախատեսված չէ:

Մեր պարագայում, նշված իրավանորմերի կիրառումը սույն գործի նկատմամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ բանկի կողմից արդեն իսկ տրված երաշխիքը մրցութային հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնայնի հասցեին ուղարկած լինելու փաստն ակնհայտորեն վկայում է, որ տվյալ երաշխիքը տված բանկն իրավունք չունի այն ետ կանչել, քանզի դրանում այլ պայման սահմանված չէ: Այսինքն, մրցութային հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված իրավանորմերը, ակնհայտորեն պետք է վստահ լիներ, որ բանկի կողմից Ընկերությանը տրամադրվել է երաշխիք, որն ուժի մեջ է մտել արդեն իսկ տրված լինելու փաստով և այն ետկանչման ենթակա չէ:

Հետևաբար, ըստ էության առկա է եղել այն փաստաթուղթը (երաշխիքը), որը պետք է ծառայեր Ընկերության կողմից մրցույթի հայտ ներկայացնելու փաստով ստանձնած պարտավորությունների կատարմանը, և Պատվիրատուի մոտ չէր կարող առաջանալ՝ Ընկերության կողմից իր պարտավորությունների չկատարման ողջամիտ կասկած:

Ուստի, այս տեսանկյունից գտնում ենք, որ բանկային երաշխիքն էլեկտրոնային համակարգի միջոցով չուղարկելու, այլ ուղղակի մրցութային հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ուղարկելու փաստով ընկերության կողմից թույլ տված խախտումը կարելի որակել որպես օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված ձևական բնույթի խախտում, որը չի վկայում Ընկերության կողմից իր ստանձնած պարտավորությունների չկատարման կամ այդ պարտավորությունների կատարումից խուսափելու մասին:

Ի վերջո, պետք է արձանագրել, որ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա/ կետով սահմանված նորմի կիրառումն ինքնին հանդիսանում է տույժ, որի կիրառումը ցանկացած պարագայում չպետք է լինի ինքնանպատակ, պետք է լինի համաչափ և ծառայի տույժի կիրառման համար սահմանված նպատակներին:

Գտնում ենք, որ մեր պարագայում, Ընկերության նկատմամբ օրենքով սահմանված տույժի կիրառումը չի կարող դիտարկվել մրցութային հանձնաժողովի կողմից արձանագրված խախտման բովանդակությանը համաչափ տույժ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով պարտավորության խախտման մեջ Ընկերության մեղքի (միտումնավոր գործողությունների) բացակայությունը և նկատի ունենալով Ընկերության կողմից առաջարկված անհամեմատ մատչելի գինը և հետագայում ևս հնարավոր մատչելի առաջարկներ ներկայացնելու վերջինիս հնարավորությունը և պատրաստակամությունը՝ գտնում ենք, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու՝ Երևանի քաղաքապետարանի առաջարկն ենթակա է մերժման:»:

«ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/192 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 14:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.04.2022թ. թիվ 01/456-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/85» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ–ն (այսուհետև՝ Մասնակից):

Ընթացակարգի շրջանակում Մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջով՝ մերժել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա պարբերությամբ, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Կից Ձեզ են տրամադրվում Մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/192 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 14:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/192 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/192 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ավտոտեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/85» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Ընկերության կողմից հաստատված փաստաթղթերը (Հավելված 1) դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված N 1.2 և չի ներկայացվել հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ընթացակարգի շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները Ընկերության կողմից շտկվել են մասնակի՝ «ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով չի ներկայացվել հրավերով պահանջվող հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

5. «Արդշինբանկ» ՓԲԸ-ի office@ardshinbank.am էլ. փոստի հասցեից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի vachagan.mejunc@yerevan.am էլ. փոստին է ուղարկվել էլեկտրոնային գրություն, որով տեղեկացրել են, որ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/85» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում թողարկվել է N ՐԲԵՆ22/86-01 երաշխիքը:

6. «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կորպորատիվ բիզնեսի տնօրեն Ա. Գյուլազյանի կողմից 26.04.2022թ. թիվ 200-3757 համարի գրության համաձայն.

«Հայտնում եմ Ձեզ, որ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի ներքին իրավական ակտերով սահմանված նորմերի համաձայն՝ անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման դեպքում բանկային երաշխիքի տրամադրման տևողությունը կազմում է մինչև 9 աշխատանքային օր (որոշ դեպքերում նաև ավել):

Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ Ձեզ, որ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/85 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար Ձեր դիմումի հիման վրա 05.04.2022թ. թողարկված N ՐԲԵՆ22/86-01 երաշխիքի վերաբերյալ համապատասխան նամակը office@ardshinbank.am էլեկտրոնային փոստից ուղարկվել է vachagan.mejunc@verevan.am էլեկտրոնային փոստին 05.04.2022թ.-ին ժամը 17:18-ին:»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.04.2022թ. թիվ 26/26-1/6783-2022 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 12.04.2022թ. թիվ 01/456-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով

սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***<u>Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ</u>***

<u>փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:</u>

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ավտոտեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/85» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Ընկերության կողմից հաստատված փաստաթղթերը (Հավելված 1) դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված N 1.2 և չի ներկայացվել հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ընթացակարգի շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները Ընկերության կողմից շտկվել են մասնակի՝ «ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից

էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով չի ներկայացվել հրավերով պահանջվող հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի office@ardshinbank.am էլ. փոստի հասցեից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի vachagan.mejunc@yerevan.am էլ. փոստին է ուղարկվել էլեկտրոնային գրություն, որով տեղեկացրել են, որ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/85» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում թողարկվել է N ԲԵՆ22/86-01 երաշխիքը:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի կորպորատիվ բիզնեսի տնօրեն Ա. Գյուլազյանի կողմից 26.04.2022թ. թիվ 200-3757 համարի գրության համաձայն.

«Հայտնում եմ Ձեզ, որ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի ներքին իրավական ակտերով սահմանված նորմերի համաձայն՝ անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման դեպքում բանկային երաշխիքի տրամադրման տևողությունը կազմում է մինչև 9 աշխատանքային օր (որոշ դեպքերում նաև ավել):

Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ Ձեզ, որ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/85 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար Ձեր դիմումի հիման վրա 05.04.2022թ. թողարկված N ԲԵՆ22/86-01 երաշխիքի վերաբերյալ համապատասխան նամակը office@ardshinbank.am էլեկտրոնային փոստից ուղարկվել է vachagan.mejunc@verevan.am էլեկտրոնային փոստին 05.04.2022թ.-ին ժամը 17:18-ին:»:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն, որպես շտկում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կրկին արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ չի ներկայացվել հրավերով պահանջվող հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Սակայն, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը, դրանում առկա փաստական ու իրավական հանգամանքները, կից նյութերը և մասնավորապես՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կորպորատիվ բիզնեսի տնօրեն Ա. Գյուլազյանի կողմից 26.04.2022թ. թիվ 200-3757 համարի գրությունը, գտնում եմ, որ սույն դեպքում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված Ընկերության մեղքի առկայությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով

կամ պայմանագրով: ***Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:***

Այսպիսով՝ գտնում եմ, որ սույն դեպքում Ընկերությունը ***ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները*** հրավերով պահանջվող հայտի ապահովում բանկային երաշխիքը ժամանակին ներկայացնելու համար, սակայն իրենից անկախ հանգամանքներով պայմանավորված չի կարողացել 05.04.2022թ. թողարկված N ԲԵՆ22/86-01 բանկային երաշխիքի բնօրինակը ներկայացնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

Այսինքն՝ Ընկերությունը «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/85» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.04.2022թ. թիվ 26/26-1/6783-2022 գրությամբ «ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**